ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ։

---

12 Յունիսի։ Արքեպան Սինոդը պատուիրեց Աստրախանի Հայոց կոնսիստորիային՝ արձակել բարեշնորհ Պետրոս վարդապետ Ա.ղվազեանին Ղզլար քաղաքի փոխանորդական պաշտօնից, և թոյլ տալ նրան գնալ Ախալցխայ՝ կազդուրելու իր անձնական վատառողջութիւնը, և վերադառնալ Ս. Էջմիածին, իսկ Հոգևոր Կառավարութեան նախագահի պաշտօնը՝ յանձնել աւագագոյն անդամի մինչ ցայլ անօրէնութիւն։

---

26 Յունիսի։ Արքեպան Սինոդը արձակեց ծառայութիւնից Սինոդի դատաստանական մասի գործավար Բէրք Տէր-Պետրոսեանին, Հանգուցեալ Հայրապետի դրամոց և գոյից յափշտակութեան գործի համար քննութեան տակ և բանդարկուած լինելու. պատճառաւ, և ի տեղի նորա կարգեց առժամանակեայ որբա համարակալի օգնական դիւանական ծառայող Բենիամին Տէր-Գրիգորեանին։

---

10 Յուլիսի։ Արքեպան Սինոդը ըստ միջնորդութեան Երևանայ Հայոց Կոնսիստորիայի և փոխանորդի թեմական, Ս. Պետրոս Պօղոս եկեղեցւոյ Հանգուցեալ Յարութիւն քահանայի ժաղովուրդը՝ որոշեց յանձնել Վահան քահանայ Վարդեանին՝ ի մշտական հովութիւն. իսկ նոյն եկեղեցւոյ քահանաների խնդրագիրը, որոնցով չեն յօժարում՝ Վահան քահանային իրենց ընկերակից ունենալ՝ թողնել առանց հետևանքի, և Ս. Սինոդի հրամանը՝ խոստութեամբ ի կատար ածել։

---

12 Յուլիսի։ Արքեպան Սինոդը Անտոն վարդապետ Վարդազարեանին արձակեց Ամարասու վանքի վանահայրական պաշտօնից, և թողուց Մայր Աթոռի միաբանաց մէջ, և նաև հրամանագրեց

Արքեպիսկոպոս Արբրազան Աստվածորդին՝ կարգել մի ուրիշ վանահայր ի տեղի արձակեալ վարդապետի։

—

15 Յուլիսի։ Դերբենդ քաղաքի Աբրահամ քահ. Սպանդունեանը ամբաստանուելով իւր անբարոյականութեան համար տեղական ժողովրդից, թէև ամեն ջանք թափում էր անմեղ կացուցանել իւր անձը Հոգևոր Իշխանութեան դատաստանի առաջ, բայց այնուամենայնիւ յանցաւոր գտնուեց նա. ուստի Արբազան Մինոդը պատուիրեց Շամախուոյ Հայոց Կոնսիստորիային, որ Սպանդունեան քահանային, փիլոնը վրան և սաղմոսը ձեռքին առ դրան եկեղեցւոյ երկու ամիս ապաշխարել տալով՝ քաւել տայ իւր յանցանքը, ընդ հսկողութեամբ այն քահանայի, որ այժմ հովում է տեղւոյն ժողովուրդը. և գոյացեալ արդիւնքը հաւատար բաժանել իւր և պատժատարտ քահանայի մէջ։

—

21 Յուլիսի։ Արբազան Մինոդը ուշի ուշով դիտելով Մոզդոկ քաղաքի Տէր-Գաբրիէլ քահ. Տուրխայեանի անմեղութիւնը, նոյն քաղաքի եկեղեցում՝ հանգուցեալ Նունեայ Գեանջումեանցի պատկերը դնելու գործում, որոշեց արդար ճանաչել Գաբրիէլ առաք. քահանային, և անհետևանք թողնել Աստրախանի Հայոց Կոնսիստորիայի երկու տմնուան առ դրան եկեղեցւոյ տեղւոյն ապաշխարանաց վճիռը։

—